ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ ք.Արմավիր ,Հանրապետության փ. 32, Հեռ. (0237) 2-36-54,
Էլ. փոստ՝ armavirmunicipality@gmail.com

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին**

***«Կարապետ Ղավալյան Հովհաննեսի ԱՁ»-ին***

Հարգելի Կարապետ Ղավալյան

ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և Կարապետ Ղավալյան Հովհաննեսի ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/17-3** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Վաճառողին տրվել է 20 օրացուցային օր ժամանակ ապրանքները մատակարարելու համար, սակայն սահմանված ժամկետում Վաճառողի կողմից մատակարարում չի կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի հունվարի 25-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 71248,5 (յոթանասունմեկ հազար երկու հարյուր քառասունութ ամբողջ հինգ) ՀՀ դրամի և 47499 (քառասունյոթ հազար չորս հարյուր ինսունինը) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն Կարապետ Ղավալյան Հովհաննեսի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

**Հարգանքով՝**

**Արմավիր համայնքի ղեկավար՝** **Վ. Սարգսյան**